



# ԱՂՈՒԷՍՆ ՈՒ ՁԻՆ

- Գնա՛,- ըսաւ հողագործը իր ձիուն,- դուն շատ ծեր ես, ես այլեւս օգուտ մը չունիմ քեզմէ: Սակայն ծեր ձին չշարժեցաւ իր տեղէն. ան պարզապէս գլուխը կախ սպասեց:

Հողագործը հիասթափուած այս անգամ գոռաց.

- Նայէ՛ թոփին, դուն երկար տարիներ լաւապէս ծառայեցիր ինձի, բայց ես այլեւս չեմ կրնար կերակրել քեզ, որովհետեւ դուն չես կրնար աշխատիլ:

Ծերուկ ձին դարձեալ չշարժեցաւ իր տեղէն եւ գլուխը կրկին կախեց:

- Լա՛ւ, եկո՛ւր համաձայնիկք: Եթէ յաջողիս ինձի համար առիծ մը բերել, ես քեզ կը պահեմ այս տան մէջ ու կը կերակրեմ կեանքիդ մնացեալ օրերուն: Հիմա արա՛գ, առիծի որս մը ունիս կատարելիք,- ըսաւ հողագործը՝ թփթփացնելով ձիուն մէջքին, այն յոյսով որ թոփինէն խնդրածը անկարելի էր:

Թոփին դանդաղ շարժումներով դաշտէն ելաւ եւ անտառ մտաւ: Ան թափառեցաւ մինչեւ որ ամեն կողմ մուրթ կոխեց: Անտառին մէջ գիշերելու համար սկսաւ տեղ մը փնտռել:

Յաջորդ առաւօտ ան հսկայ կաղնիի մը մօտ կանգնեցաւ: Յանկարծ հոնկէ աղուէս մը անցաւ.

- Հէ՛յ, դո՛ւն,- ըսաւ ան ձիուն,- ինչո՞ւ այդքան տխուր ես: Կարծես սիրելի ընկեր մը կորսնցուցած ես:

- Այո՛, ճիշդ ես,- պատասխանեց թոփին տխրութեամբ,- ես շատ ծեր եմ եղեր ու այլեւս արժէք չունիմ, ուստի՝ ալ տուն ու ապաստան չունիմ:

- Օ՛հ, ի՞նչ սարսափելի բան,- ըսաւ աղուէսը,- միթէ բան մը չե՞ս կրնար ընել:

Թոփին յուսահատ նայեցաւ աղուէսին եւ ըսաւ.

- Առի՛ծ: Տէրս ըսաւ, թէ եթէ առիծ մը բռնեմ ու բերեմ իր մօտ, դարձեալ կրնամ տան մէջ ապրիլ:

- Ես կրնամ քեզի օգնել,- ըսաւ աղուէսը:



- Կրնա՛ս: Բայց ինչպե՛ս,- հարցուց թոփին զարմացած: Աղուէսը ծեր ձիուն բացատրեց գաղտնիքը: Ան հագիւ կը քալէր, առիծ մը տեսնելով ըսաւ.

- Բարե՛ւ, կ'ուզե՛ս, որ քեզ տանիմ նոր սատկած ձիու մը դիակին մօտ: Ան լաւ ընթրիք մը կրնայ ըլլալ:

Առիծը հրճուանքով մոնչեց եւ առանց իսկ տատամսելու արագօրէն հետեւեցաւ աղուէսին: Անոնք փոքր ճամբայէ մը հասան թոփինին անշարժ մարմնին քով, որ գետինը պառկած էր եւ սատկած ըլլալ կը ձեւացներ:

- Աւելի լաւ կ'ըլլայ, եթէ այս հիանալի կերակուրը քաշես եւ քու որջդ տանիս, որպէսզի հանգիստ, համով-հոտով ըմբռնես զայն,- խորհուրդ տուաւ աղուէսը:

Առիծը համաձայն գտնուեցաւ:

- Ես ձիուն պոչը քեզի կը կապեմ, որպէսզի դուն ալ զինք քաշես տանիս քու որջդ,- շարունակեց աղուէսը:

Առիծը գետին փռուեցաւ եւ սպասեց որ աղուէսը ձիուն պոչը իրեն կապէ: Ան չէր գիտեր, որ իր ոտքերն էին, որոնք իրարու կը կապուէին:

- Հէ՛յ, ի՞նչ կը պատահի,- մոնչեց առիծը ու սկսաւ չարչարուիլ՝ պարաններէն ազատելու համար, բայց... ապարդիւն:

Ճիշդ այն ատեն թոփին ոտքի ելաւ: «Արա՛գ, գնա՛», ըսաւ աղուէսը եւ յաջողութիւն մաղթեց ընկերոջը: Ծեր ձին դէպի տուն սուրաց՝ իր ետեւէն քաշելով զայրացած առիծը:

Հողագործին զարմանքը շատ մեծ եղաւ, երբ հեռուն տեսաւ թոփինը, թէ ինչպէս իր հետ առիծ մը քաշելով կը փութար դէպի տուն:


Այդ ժամանակ հողագործը զգաց, թէ որքա՛ն հաւատարիմ ծառայ մը եղած էր թոփինը: Ան ամօթէն գլուխը վար կախած, ծեր ձիուն վիզին թփթփացնելով ըսաւ.

- Խոստումս խոստում է: Դուն այլեւս այստեղ կրնաս ազատ ապրիլ, եւ ես քեզի համար առատ ուտելիք պիտի ապահովեմ ամբողջ կեանքիդ ընթացքին:


Այսպիսով, ծեր թոփինը կրկին տուն ընդունուեցաւ: Առիծը ազատ արձակուեցաւ եւ անհետացաւ անտառին մէջ:

ԹԻՒ ԴԱՏՐԱՍՏԵՅՑ՝ ՄԱՐՄԻՆԻ ԱՇՈՏԵԱՆ-ՇԱՀԻՆԵԱՆ  
ՆԿԱՐԱՍՏՈՂԵՅՑ՝ ՈՒՅՅԻ ԲԵՇՈՇԵԱՆ


Կրնա՞ս երկու պատկերներուն միջեւ գտնել տասը տարբերություններ:



Կրնա՞ս օգնել արջուկին՝ հասնելու մեղրին:



Գտի՛ր սենեակին մեջ կորսուած առարկաները եւ գունաւորե՛ գանոնք:




2



Պատկերին մէջ գտնուող թուաբանական հաշիւները ընելէ ետք, գունաւորե՛ գանոնք հետեւեալ ձեւով.

- 1 պատասխանը կրող բաժինը՝ բաց կապոյտ
- 2 պատասխանը կրող բաժինը՝ դեղին
- 3 պատասխանը կրող բաժինը՝ վարդագոյն
- 4 պատասխանը կրող բաժինը՝ կանաչ
- 5 պատասխանը կրող բաժինը՝ կարմիր
- 6 պատասխանը կրող բաժինը՝ մանիշակագոյն
- 7 պատասխանը կրող բաժինը՝ գոց կապոյտ
- 8 պատասխանը կրող բաժինը՝ նարնջագոյն



# ՈՐՍՈՐԴՈՒԹԻՒՆ

ՐԱՖՖԻ



Փողին ձայնը լսուեցաւ: Սամուէլ վազեց դէպի այն կողմ, ուրկէ ձայնը եկած էր: Իրեն հետեւեցաւ պատանի Յուսիկը, որ գինակիրի պաշտօն կը կատարէր, եւ քանի մը ծառայ ուներ: Ուռենիներու թաւուտներէն դուրս խոյացաւ ահագին եղջերու մը՝ ծանր, բազմաճիւղ եղջիրներով: Անփութօրէն նայեցաւ շուրջը, ապա փորձեց փախչիլ: Շուները անմիջապէս շրջապատեցին զինք, բայց չհամարձակեցան մօտենալ անոր: Սուր եղջիրները ո՛չ միայն վահանի դեր կը կատարէին, այլեւ՝ նիզակի:

Յանկարծ վրայ հասաւ Սամուէլը՝ ահագին նիզակը ձեռքին:

Եղջերուն կատաղի կերպով յարձակում մը գործեց եւ իր սուր եղջիրներով դուրս պիտի թափէր համարձակ ախոյեանին փորոտիքը, եթէ երիտասարդին նիզակը շեշտակի չմխուէր անոր աջ ուսին: Բայց նիզակը, միայն խոցեց, առանց մահացու վերքեր յառաջացնելու: Շուները դարձեալ շրջապատեցին որսը, իսկ Սամուէլ կրկնեց նիզակին զարկը: Այս անգամ հարուածը դպաւ ազդրին: Եղջերուն, խրտչելով, պատռեց շուներուն շղթան եւ սկսաւ փախչիլ: Ծառաներէն ո՛չ մէկը կրցաւ անոր առջեւն առնել: Սամուէլ հետապնդեց կատաղի անասունը:

Քիչ անդին, իր ուղեկիցներուն հետ կեցած, Սամուէլի հայրը անհամբերութեամբ կը դիտէր երկու ախոյեաններուն սրարշաւ վազքը: Ան կ'ուզէր անձամբ տեսնել, թէ ինչպէս որդին իր անհաւասար պայքարը կը վերջացնէ որսին դէմ:

Եղջերուին երկար, ճապուկ ոտքերը հագիւ կը դպչէին գետնին. իր արշաւի սաստկութեան մէջ ահագին թռիչքներ կը գործէր ան: Սամուէլ անդադար նետեր կ'արձակէր անոր ետեւէն: Նետերը, թէւ ծանր, բայց փետուրէ գրիչներու նման ցցուած կը մնային եղջերուին մարմնին վրայ:

Վիրաւոր անասունը կը շարունակէր փախչիլ, իր ճամբուն վրայ ձգելով հոսող արեան կարմիր հետքերը: Չայրացած էին նաեւ Սամուէլի ծառաները, որոնք շուներուն հետ կը վազէին աջ ու ձախ եւ յամառ անասունին ճամբան կտրելով, կ'աշխատէին արգիլել դէպի գետափ անոր փախուստը, այն վախով որ թերեւս ան նետուէր գետին մէջ եւ լողալով անցնէր միւս ափը:

(Շարունակելի)

## ԻՆՉՈ՞Ւ ԶՆԴԿԱԿԱՆ ԺԱՄԸ ՏԱՐՕՐԻՆԱԿ Է

Որովհետեւ Զնդկաստանի ժամը Սուրիայէն 3:30 ժամ անելի առաջ է: Ան յաւելեալ 30 վայրկեանի տարբերութիւն մը ունի: Երբ Սուրիոյ մէջ ժամը 16:00 է (կեսօրէ ետք ժամը 4:00), Նիւ Եորքի ժամացոյցները առտուան ժամը 9:00-ը ցոյց կու տան, իսկ Սիտնիի մէջ, Աւստրալիա, առտուան ժամը 1:00-ն է, եւ մարդիկ խոր քունի մէջ կ'ըլլան:

Իսկ Զնդկաստանի՞ մէջ: Զոն ժամը 19:30 (իրիկուան ժամը 7:30): Ըստ երկրագունդին վրայ իրենց դիրքին, բոլոր երկիրները նոյն ժամերը չունին, սակայն ունին նոյն վայրկեանները, բացի Զնդկաստանէն եւ կարգ մը ուրիշ երկիրներէն, որոնց ժամը կը տարբերի 30 վայրկեանով: Կան նոյնիսկ երկիրներ, ինչպէս Նեփալ եւ Չաթհամ կղզիները, որոնց ժամը կը տարբերի 45 վայրկեանով:



## ԳԵՏՆԱԽՆՁՈՐԷ ՏՈՊՐԱԿՆԵՐ

Չետեւի՞նք խոհագիրին.

Գետնախնձորէն բուսալիւր կ'առնենք: Չայն կը վերածենք շատ բարակ խմորի մը, որ կը տաքցուի եւ կաղապարի մը մէջ կը պարպուի...

Իսկ այս խմորով ի՞նչ պիտի շինենք. կարկանդա՞կ: Ո՛չ. այս կաղապարով կը շինենք տոպրակ մը... գոր պիտի գործածենք գետնախնձոր գնելու ատեն: Այս տոպրակներուն առաւելութիւնը այն է, թէ անոնք բնական նիւթ պատրաստուած են. հետեւաբար, անոնք չեն ապականեր ո՛չ մթնոլորտը, ո՛չ ալ՝ բնութիւնը:

